Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ծրագրերի իրականացման վարչության ուսանողների աջակցության բաժնում (այսուհետ՝ Բաժին) փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքի համառոտ նկարագիրը

1) մասնակցություն բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտին առնչվող իրավական ակտերի, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակման աշխատանքներին,

2) մասնակցություն տվյալ ուսումնական տարվա համար ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտուրայի, օրդինատուրայի կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ձևավորման ու բաշխման աշխատանքներին,

3) մասնակցություն ուսանողների որոշակի խմբերի ուսման վարձավճարների փոխհատուցմանը, ֆինանսական աջակցությանն ու կրթաթոշակ տրամադրելուն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին,

4) մասնակցություն բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տվյալ տարվա բյուջետային հայտերի կազմման աշխատանքներին,

5) մասնակցություն Կառավարության գործունեության ծրագրից բխող միջոցառումների իրականացման աշխատանքներին,

6) մասնակցություն Բաժնի գործառույթների շրջանակներում Կոմիտե ներկայացված դիմումների, գրությունների և առաջարկությունների քննարկմանն ու բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքներին:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. բարձրագույն կրթություն,

2. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների և իր գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ իրավական այլ ակտերի իմացություն:

Փորձագետ ներգրավելու ժամկետը

Փորձագետը ներգրավվում է երեք ամիս ժամկետով:

Փորձագետի պարտականությունները

1) բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին հաշվետվություն,

3) պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. լուսանկար 1 հատ (3x4 չափի),
2. դիմում (ձևը կցվում է),
3. անձնագիր (ՀԾ համարանիշ),
4. դիպլոմ (դիպլոմներ),
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
6. զինվորական գրքույկ (առկայության դեպքում),
7. հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (ձևը կցվում է),
8. ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կկատարվի դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (+374 10) 210140 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2024 թվականի հուլիսի 26-ը: